

**«ԲԱՐՁՐԱՎՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՁԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի «ԱՐԱԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԲՈՂԱՔԱՐ
ԳԵՏԻ ՁԱԽ ԱՓԻՆ ՀԱՐՈՂ 8.4 ՀԱ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**



ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկատվություն4

2. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը.....4

3. Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և գործունեության իրականացման նպատակը, ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը.....5

4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածք, շրջակա միջավայրի նկարագիր, բնական պայմաններ, ռաաաաեսուերսների բնութագիր.....6

4.2.Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը13

5. Նախատեսվող գործունեության նկարագիրը, հզորությունները, ֆիզիկական, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը(շինարարության և շահագործման, փակման փուլ).....38

6. Օգտագործվող բնառեսուերսներ և կյութեր.46

7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....47

7.2. Հողային ռեսուերսներ.....48

7.3. Ջրային ռեսուերսներ.....51

7.4. Կենսաբազմազանություն.....52

7.5 Թափոններ.....54

7.6 Արտակարգ իրավիճակներ, Հրդեհանվտանգություն.....54

7.7 Աղմուկ և թրթռում, վիբրացիա:.....55

7.8. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....55

7.9 Աշխատանքի անվտանգություն և մարդու առողջություն.....55

7.10 Սոցիալական ազդեցություն.....56

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի վրա Էական վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է «Արևիք»ԱՊ-ի ոչ անտառապատ տարածքում՝ նոսրուտներում: Անտառպատումը կնպաստի լանշաֆտի ` կանաչ հատվածի ավելացմանը,հողի որակական հատկանիշների բարելավմանը, կապահովի բնական միջավայրի լանդշաֆտաԷկոլոգիական հավասարակշռության պահպանությունը:.....57

8. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր/շինարարության և շահագործման փուլեր/57

8.1. Օդային ավազան58

8.2. Հողային ռեսուերսներ58

8.3. Ջրային ռեսուերսներ.....58

8.4. Կենսաբազմազանություն.....59

8.6. Թափոններ.....61

8.7. Արտակարգ իրավիճակներ, Հրդեհանվտանգություն.61

8.8. Աղմուկ և թրթռում.....61

8.10. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....62

8.11. Սոցիալական գործոններ.	63
8.12. Լանդշաֆտ. Բարեկարգում	63
9.Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը	63
(Մոնիթորինգ).	63
10.Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան	65
12.Բողոքների ընթացակարգ	81
13.Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	81
14. Հավելվածներ.....	84
Գրականություն	85

1. Տեղեկատվություն

➤ Հաշվետվություն	«ՉԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի «ԱՐԼԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատում
➤ Պատվիրատու՝	«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
➤ Նախաձեռնող՝	«ՍՈԼԻԴ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
➤ Նախաձեռնողի իրավաբանական հասցեն, հեռախոս, Էլեկտրոնային փոստ՝	ք. Երևան Շարա Տայյան 7 094780329, vertraggbh@gmail.com
➤ Գործունեության փաստացի հասցեն՝	ՀՀ Սյունքի մարզ, «Արևիք» ԱՊ-ի տարածք
➤ Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Սյունիքի մարզի, Մեղրի համայնք
➤ Աշխատանքային նախագծի մշակող՝	«ՍՈԼԻԴ ԹՐԵՅԴ» ՍՊԸ

2. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է 2023 թվականի մայիսի 3-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները) Օրենքի համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության Բ կատեգորիայով, համաձայն Օրենքի Օրենքի 12-րդ հոդվածի Բ կատեգորիայի 4-րդ մասի, 5-րդ կետի, բ. ենթակետի, որպես

անտառապատման ոլորտի իրականացվող գործունեություն՝ «անտառապատում, բացառությամբ անտառային հողերի»:

Օրենքով սահմանված կարգով իրականացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթաց, ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան:

3. Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և գործունեության իրականացման նպատակը, ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը.

Նախատեսվող գործունեության Նախաձեռնողը «ՍՈԼԻԴ ԹԻԵՅԴ» ՍՊ ընկերությունն է, որի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Շարա Տայյան 7: Գործունեությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում՝ «ՉԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈՒՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի «ԱՐԼԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ Բողաքար գետի ձախ ակիին հարող 8.4 հա տարածքի վրա:

Նախատեսվող գործունեության նպատակ. «Իրան-Հայաստան 400կվ 3-րդ Էլեկտրահաղորդման օդային գիծ և համապատասխան ենթակայան» կառուցման ծրագրի իրականացման շրջանակներում, անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման նպատակով «Չանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի տարածքում անտառապատման աշխատանքների իրականացում: Աշխատանքների ընթացքում վնաս է հասվցվել «Արևիք» ազգային պարկին՝ 4,2հա անտառածածկ տարածքին: «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Չանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հետ քննարկման արդյունքում առաջարկվել է Բողաքար գետի ձախ ակիին հարող 8.4 հա տեղակարգը:

Անտառապատման ՇՄԱԳ հաշվետվության կազմման համար հիմք են ծառայել նախատեսվող գործունեության նախագիծը:

Նախատեսվող գործունեության նախագծման հիմքերը. Անտառապատման իրականացման համար հիմք է հանդիսացել.

- «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանալու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N1045-Ն որոշումը, համաձայն որի պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցուղիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների իրականացման ժամանակ անտառօգտագործողը պարտավորվում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով իրականացնել անտառապատման աշխատանքներ:
- «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքված N «ԲԷՑ-ԳՅԾԶԲ-23/28» պայմանագիրը:

4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածք, շրջակա միջավայրի նկարագիր, բնական պայմաններ, ռաաաաեսուրսների բնութագիր

4.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը:


Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը ներառում է Մեղրի խոշորացված համայնքի վարչական տարածքում՝ Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր գյուղերը:

Անտառապատման համար ընտրված ընդհանուր տարածքը կազմում է 10.2 հա, որից անտառապատման ենթակա տարածքը կազմում է 8.4 հա: Ընդհանուր տարածքը բաղկացած է երկու առանձին հողակտորներից, որոնց միջև հեռավորությունը կազմում է 350մ: Բուն գործունեության տարածքն ընդգրկում է «ՉԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի «ԱՐՆԻԲ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքը: Ելնելով հողակտորներից մեկով անցնող ռազմավարական և հակահրդեհային սշանակության ճանապարհի անխափան անցանելիությունն ապահովելու անհրաժեշտությունից, որտեղ անտառապատման աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմում է 8,4 հա, տարածքը պայմանականորեն բաժանվել է չորս առանձին հողակտորների և համարակալվել.

- հողակտոր 1-ի մակերեսը կազմում է 5հա,
- հողակտոր 2՝ 1,7հա,
- հողակտոր 3՝ 0.8հա,
- հողակտոր 4՝ 0.9հա

Անտառապատման համար ընտրված տարածքն իրենից ներկայացնում է ևսորոտ: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1700մ միջին բարձրության վրա:


Նկար 1.



Տարածքը հանդիսանում է պետական սեփականություն, մոտակա բնակավայրերն են «Մեղրի» խոշորացված համայնքի՝ Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր գյուղերը:

հրադրության սխեմա

Գծապատկեր 1



Անտառպատման տարածքի հողերի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնապահպանական: Անտառպատման տարածքի հողերը ներառում են ջրովի վարելահող՝ 1.43հա, պտղատու այգի՝ 1.8հա, անտառ՝ 5,17 հա:

Կլիմա. Տարածքում առկա են կլիմայական գոտիների՝ տաք, չոր մերձարևադարձային, բարեխառն, չափավոր ցուրտ: Մեղրու տարածաշրջանում ձմեռները սակավածյուն են և մեղմ, հաստատուն ձնածածկույթ առաջանում է առանձին տարիներին:

Չոր մերձարևադարձային կլիման ընդգրկում է մինչև 390-700մ բարձրության տարածքները: Այն գլխավորապես տարածված է Մեղրու կիրճի նախալեռներում: Չափավոր տաք կլիման մեղմ ձմեռներով ձևավորվել է մինչև 1000մ բարձրությունների վրա: Բարեխառն կլիման մեղմ ձմեռներով ձևավորվում է մինչև 1300մ

բարձրությունների վրա: Բարեխառն ամբողջ տարին համեմատաբար խոնավ կլիման ձևավորվում է լեռնալանջերին մինչև 1500-1700մ բարձրությունների վրա, որը բավարար խոնավությամբ կլիմայի միակ տիպն է: Բարեխառն կլիման՝ մեղմ ամառներով և համեմատաբար ցուրտ ձմեռներով ձևավորվում է մինչև 2200մ բարձրությունների վրա: Գերակշռում են ցուրտ եղանակները: Չափավոր ցուրտ կլիման կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով ձևավորվում է 2200-3000մ բարձրությունների վրա:

«Արևիք» ազգային պարկի կլիմայական տիպերը պայմանավորված են ուղղաձիգ գոտիականությամբ և լեռնաշղթաների դիրքադրությամբ: Կլիմայական պայմանների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողնում տարածքի բարձրությունները ծովի մակերևույթից, գետահովիտների և գոգավորությունների մորֆոլոգիական առանձնահատկություններն ու պարփակվածությունը: Տարածքի կլիմայական գոտում ձմեռը տևական է, կայուն ձյունածածկույթով: Ձմեռը սկսվում է նոյեմբերի 3-րդ տասնօրյակին և ավարտվում ապրիլի 1-ին տասնօրյակում: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը՝ -5°C է, նվազագույնը՝ -10°C , իսկ բացարձակ նվազագույնը չի իջնում -31°C -ից: Գարունը երկարատև է, սառն ու խոնավ: Ամսեկան միջին տեղումների քանակը 60-100մմ է: Գարնանային ցրտահարություններն ավարտվում են ապրիլի 3-րդ տասնօրյակում: Ամառը տաք է, համեմատաբար՝ խոնավ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 18°C է, առավելագույնը 32°C : Ամսական տեղումների քանակը 30մմ է: Աշունը մեղմ է, առաջին կեսում առավելապես քիչ ամպամած և տաք եղանակ է: Աշնանային առաջին ցրտահարությունները սկսվում են հոկտեմբերի առաջին կեսին: Ոչ սառնամանիքային օրերի թիվը 150-180 է: Տեղումների տարեկան քանակը 600մմ է:

Լեռնալանջերի և գետահովիտների մեծ մասն ուղղված են դեպի արևելք, որի հետևանքով արևելքից ներթափանցող օդային զանգվածները բարձրանալով լանջերն ի վեր, հետզհետե սառչում են, մեծացնելով հարաբերական խոնավությունը: Այդ պատճառով արևելահայաց լանջերը անտառապատ են, իսկ արևմտյան և հյուսիսային լանջերին տեղումները համեմատաբար քիչ են:

Քամիների ռեժիմը դրանց ուղղությունը և արագությունը մեծապես պայմանավորված են ռելիեֆով, հովիտներում դրանք փչում են հիմնականում երկայնական ուղղությամբ:

Հողային շերտը. «Արևիք» ազգային պարկի տարածքում գերակշռում են լեռնաանտառային դարչնագույն հողերը, որոնք արտահայտված են տարբեր դրսևորումներով՝

1. Առավել տիպիկ դարչնագույն հողեր՝ կարբոնատային իլուվիալ հորիզոնով
2. Տարավազցվող անցումային թույլ արտահայտված կարբոնատային հորիզոնով կամ դրանից ընդհանրապես զուրկ հողեր:

Ստորին գոտիներում գերիշխում են բավականին լավ ձևավորված դարչնագույն անտառային հողերը, որոնք տարածված են են 900-1300մ բարձրություններում և հարուստ են կարբոնատներով:

Առավել բարձր գոտիներում, որոշ դեպքերում, ժայռերի ճեղքերում ու գոգավորություններում առկա է հողի աննշան շերտ, երբեմն հանդիպում են թույլ հզորության կմախքային հողեր:

Դիտարկվող տարածքում իրականացվել է հողային նմուշառման աշխատանքներ: Տեղաքնում տարբեր դիրքադրության և թեքության լանջերին տեղադրվել են 5 հողային կտրվածք մինչ 1.2մ խորությամբ:







Դիտարկվող տարածքում իրականացվել է հողային նմուշառման աշխատանքներ: Տեղաքնում տարբեր դիրքադրության և թեքության լանջերին տեղադրվել են 5 հողային կտրվածք մինչ 1.2մ խորությամբ :

Աշխարհատեղեկատվական համակարգերի միջոցով իրականացվել է հողային նմուշների հետազոտված տարրերի տարածական միջարկում, որի արդյունքում ստացվել է հետազոտման տարածքի պատկերն ըստ համապատասխան ցուցիչի պարունակության:

Հետազոտման տարածքի պատկերներն ըստ ուսումնասիրված ցուցիչների արդյունքների

Նկար 2





Ըստ սեյսմիկ հատկության՝ ԶՅՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազևնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Ծառերի տեղադրման տարածքի կորդինատները WGS համակարգով.

2	1	8599153,365	4318329,547
	2	8599343,389	4318396,218
	3	8599474,919	4318375,477
	4	8599470,776	4318452,821
	5	8599327,048	4318479,952
	6	8599299,863	4318428,158
	7	8599153,17	4318398,17
	8	8599106,054	4318344,385
3	1	8599791,388	4318436,275
	2	8599758,831	4318501,39
	3	8599661,847	4318481,511
	4	8599645,985	4318532,831
	5	8599713,661	4318567,59
	6	8599800,613	4318523,942
	7	8599830,047	4318443,474
1	1	8599798,583	4318427,051
	2	8599838,776	4318288,171
	3	8600051,241	4318244,706
	4	8600229,155	4318404,767
	5	8600332,518	4318443,307
	6	8600317,584	4318559,82
	7	8600187,152	4318488,881
	8	8600048,939	4318363,434
	9	8599927,792	4318382,59
	10	8599853,797	4318447,778
4	1	8599863,053	4318431,164
	2	8599987,572	4318367,876
	3	8599992,654	4318396,754
	4	8599920,208	4318434,974
	5	8599930,451	4318454,588
	6	8599850,667	4318557,624
	7	8599743,193	4318592,021
	8	8599735,573	4318578,488
	9	8599833,189	4318502,834

4.2.Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սյունիքի մարզի Զաջարան խոշորացված համայնքի տարածքում: Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում, ներառում է Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու շրջանները: Այն հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից պետական սահմանով՝ Իրանին, արևմուտքից և արևելքից՝ Ադրբեջանին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Չանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Չանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ընդհանուր տարածքը կազմում է 4506 քառ. կմ, որը կազմում է ՀՀ տարածքի 15.2%-ը: Սահմանի երկարությունը 472 կմ է:

Նկար 3



Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Այն հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից պետական սահմանով՝ Իրանին, արևմուտքից և արևելքից՝ Ադրբեջանին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Չանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Չանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Սյունիքի մարզը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Չանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի արևելյան լանջերը: Հիմնական լեռնագրական միավորները Չանգեզուրի լեռնաշղթայի ճյուղավորումներն են՝ հյուսիսից Բարգուշատի լեռները, արևմուտքից՝ Մեղրու լեռները, իսկ կենտրոնական հատվածում՝ Խուստուկի-Կատարի լեռները: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3904 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտը՝ 380մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200մ: Տարաշրջանին բնորոշ են լեռնային ռելիեֆը և կտրտվածությունը: Աչքի է ընկնում ջրբաժանների և


գետահովիտների բացարձակ բարձրությունների մեծ տատանումներով, ժայռային մերկացումներով: Լեռնագագաթներին մտնում են ձյան հետքեր: Լեռնալանջերը ծածկված են անտառներով: Առկա են սողանքային երևույթներ:

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքին բնորոշ են ստորին-միջին յուրայի, վերին յուրայի, ստորին կավճի նստվածքային-հրաբխային առաջացումները, իսկ գետահովիտների ցածրադիր հատվածներում առկա են ժամանակակից այլուվիալ-դելուվիալ նստվածքները: Սյունիքն օգտակար հանածոներով Հայաստանի հանրապետության ամենահարուստ մարզն է, որտեղ գործում են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը, որոնցից շահագործվում են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Լիճքի հանքավայրերը: Չգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, հարուստ է հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներով, անտառներով և ալպյան մարգագետիններով:

Սեյսմիկա և երկրաբանություն. մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են, պայմանավորված են Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի ազդեցությամբ: Շրջանի տարածքում հայտնի են Լռնաձոր-Բոլիշենի և Շվանիձորի խզումները:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0,3-0,4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Գծապատկեր 2



Կլիմա և օդային ավազան

ՀՀ Սյունիքի մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են

Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն՝ մեղմ ամառներով և համեմատաբար ցուրտ ձմեռներով, չափավոր ցուրտ լեռնային՝ կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով:

Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Մեղրու տարածաշրջանում գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 12սմ, միջին տարեկան մթնոլորտային ճնշումը՝ 943,7Պա, քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1,3մ/վ, տարիների ընթացքում քամու հաշվարկային արագության կրկնելիությունը 25 տարին մեկ անգամ՝ 18մ/վ: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է Մեղրի քաղաքում կազմում է տարեկան 2368 օր: Քամու ուղղությունը հիմնականում որոշվում է գետերի հովիտների ուղղությամբ:

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը: Ներկայացված են համապատասխան կլիմայական ցուցանիշները Մեղրի և Քաջարան օդերևութաբանական կայանների համար:

Աղյուսակ 1

Օդի ջերմաստիճանը, °C

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
21. Մեղրի	1.7	3.8	8.5	14.1	19.0	23.5	26.5	26.0	21.6	15.5	9.4	4.2	14.5	-18.0	43.7
28. Քաջարան	-3.0	-2.7	0.8	6.3	10.4	14.6	17.2	16.9	13.6	8.3	2.8	-1.4	7.0	-24.0	35.0

Աղյուսակ 2

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա. / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընդամենը
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

21.	Մեղրի	մ. ա.	6.2	8.8	14.3	20.6	25.6	29.4	31.8	31.4	27.6	22.0	14.9	8.6	20.1
		մ. ն.	-1.2	0.3	4.1	8.9	13.3	17.6	21.0	20.5	16.1	10.2	5.4	1.2	9.8
28.	Քաջարան	մ. ա.	2.3	2.9	6.3	12.2	16.4	20.9	23.3	22.9	19.7	14.2	8.4	3.9	12.8
		մ. ն.	-6.6	-6.3	-3.0	2.3	6.3	10.1	13.0	12.7	9.4	4.4	-0.5	-4.7	3.1

Օդի հարաբերական խոնավությունը (%)
Աղյուսակ 3

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
21. Մեղրի	65	62	61	62	62	55	50	51	60	67	68	66	61	65	55	50	39	
28. Քաջարան	68	70	71	69	71	66	61	63	68	71	70	68	68	68	63	61	54	

Մթնոլորտային տեղումները
Աղյուսակ 4

ՄԹՆՈՒՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը Նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	15	16
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

21. Մեղրի	16	19	32	41	50	28	11	8	13	24	25	15	282	107	175
	25	23	32	36	46	38	39	53	28	35	45	18	53		
28.Քաջարան	48	55	74	79	85	48	22	19	29	52	53	44	608	274	334
	54	35	62	53	37	37	27	65	35	38	52	36	65		

Քամի

Աղյուսակ 5

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին արագությունը, մ/վ	ըստ ուղղությունների	Անորոշի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշտող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշտող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
27. Մեղրի	հունվար	9	5	22	13	11	9	14	17	55	1.3	Արլ	2.0	ՀսԱրմ	2.3		
		2.3	1.9	1.8	2.2	2.1	2.2	2.3	2.3								
	ապրիլ	9	9	34	21	9	3	6	9	54	1.3						
		2.4	1.8	1.9	2.3	2.2	2.2	2.3	2.4								
	հուլիս	12	8	36	24	6	2	4	8	44	1.6						
		2.1	2.1	2.0	2.4	2.1	1.9	2.1	2.1								
	հոկտեմբեր	12	9	32	21	8	3	6	9	60	1.1						
		2.3	1.8	1.7	2.1	2.1	1.9	2.0	2.1								
35.Քաջարան	հունվար	5	1	13	27	6	9	19	20	58	1.2	Արլ	2.4	ՀսԱրմ	4.1		
		2.7	3.0	1.9	2.2	2.5	3.1	3.6	4.1								
	ապրիլ	4	1	17	42	6	6	11	13	50	1.3						
		2.5	2.5	2.1	2.2	2.0	2.7	3.3	3.2								
	հուլիս	2	1	28	56	3	1	2	7	49	1.3						
		1.7	1.6	2.4	2.8	2.0	1.9	1.9	1.9								
	հոկտեմբեր	3	1	23	39	4	6	13	11	60	1.0						
		2.6	2.5	1.9	2.4	2.0	2.6	3.1	2.9								

Արևափայլի տևողությունը


Աղյուսակ 6

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
22. Մեղրի	ժ	99	120	165	185	245	295	318	305	243	181	122	90	2368
	օր	8	7	6	4	2	1	0.2	0.4	1	3	6	9	48
29. Քաջարան	ժ	117	108	115	116	146	199	210	221	184	145	126	119	1806
	օր	10	10	12	12	9	5	5	5	6	9	9	10	102

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Չամաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Մեղրի տարածաշրջանը գտնվում է տաք կլիմայական գոտում: Ծովի մակարդակից մինչև 1200մ բարձրությունները ամառը՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ: Ձմեռը՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը(ժամը 15-ին)՝ 60-70% , քամու միջին արագությունը՝ 2,0-3,0մ/վ:

Օդային ավազան. Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 օդերևութաբանական կայաններում՝ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Նկար 3

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար Նյութերի Ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի կետերը բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների ներկայացվում է հետևյալ աղյուսակով.

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Հողային ռեսուրսներ. Հայաստանի հողային ծածկույթը շատ բազմազան է, ինչը պայմանավորված է՝ տարաբնույթ ապարների, կլիմայական պայմանների, բուսականության և տեղանքի ռելիեֆի գործոններով:

Համաձայն կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Չանգեզուրի Սյունիքի տարածաշրջանում 1250-1950մ բարձրության սահմաններում գերակշռում են շագանակագույն հողերը, ունեն թույլ հիմնային և հիմնային ռեակցիա (pH=7,4-8,5), հզորությունը տատանվում է 30-40սմ սահմաններում, իսկ ռելիեֆի ցածրադիր մասերում՝ մինչև 50-60 և ավելի սանտիմետրի:

Սյունիքի մարզի՝ ծովի մակերևույթից 1400-2000 մ բարձրությունների վրա, որն ընդգրկում է լեռնատափաստանային մասերը, հողածածկույթը կազմում են մուգլեռնաշագանակագույն և կրագերծված լեռնային սևահողերը՝ միջակ կավային մեխանիկական կազմով, 1,21-1,27 գ/սմ³ միջին խտությամբ և 51,1-53,1%, հողի ծակոտկենությամբ:

Ծովի մակերևույթից 2000 մ-ից ավելի բարձրությունների վրա, տարածված են լեռնային սևահողային, լեռնամարգագետնային, լեռնաանտառային մասերը, հողերն ունեն միջակ կավավազային և ծանր կավային մեխանիկական կազմ, միջին խտությունը տատանվում է 1,16-1,24 գ/սմ³, հողի ծակոտկենությունը՝ 52,4-55,2 %:

Որոշ բարձրադիր հատվածներում , որտեղ առկա են անտառային հատվածներ՝ ձևավորվել են անտառային դարչնագույն կրագերծված կավայնացված հողերը, իսկ անտառազուրկ հատվածները՝ տափաստանացված են:

Նկար 4



Քաղաքային և հողերի էրոզվածության աստիճանները: Հողերի պահպանման գլխավոր ուղղությունն էրոզիայի դեմ պայքարն է, որի նպատակն է պաշտպանել հողի վերին՝ առավել բերրի շերտը տեղատարումից, վերականգնել և բարելավվել հողատարածությունները:



Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտատնային իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն՝ 2022թ. տարեկան տեղեկագրի՝ 2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն են իրականացվել նաև Սյունիքի մարզում և Քաջարան քաղաքում:

Աղյուսակ 7

Մարզ/Քաղաք	Վանաշիջում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
<i>Գերազանցումը համապատասխան ՄԹԿ-ից, անգամ</i>							
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

Գծապատկեր 3




Գծապատկեր 129. Որոշ քաղաքների հողային ծածկությունում մետաղների պարունակությունը

Ջրային ռեսուրսներ. ՀՀ Սյունիքի մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր, որոնցից առավել խոշորներն են Որոտանը, Ողջի և Մեղրի գետերը: Մարզում առկա են՝ Սպանդարյանի, Տուլոսի, Շամբի, Անգեղակոթի և Գեղի ջրամբարները: Հանքարդյունաբերական գործունեությանը պայմանավորված ծանր մետաղներով հատկապես աղտոտված է Ողջի գետը: Հարավում Սյունիքի ֆիզիկա-աշխարհագրական շրջանի սահմանն անցնում է Արաքս գետով:


Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2024 թվականի 1-ին հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Մակերևութային և ստորերկրյա ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական միջև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ. սնուցող նյութեր. ծանր մետաղներ), տարբերակելով կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս). «լավ» (2-րդ դաս). «միջակ» (3-րդ դաս). «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Նկար 6



Համաձայն «Հիդրոոդերուլթաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքի, 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի՝ Մեղրի գետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նկար 5



2024 թվականի 1-ին եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 3 Որոշված դիտակետում: ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, մանգանի, նիկելի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿները:

Կենսաբազմազուրկուն. ՀՀ Սյունիքի մարզը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի,

ռելիեֆի կտրտվածության, լանջերի տարբեր դիրքադրության, հայտնի է իր հարուստ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությամբ: Այն հիմնականում գտնվում է բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Չանգեզուրի ֆլորիստիկ շրջանին, որտեղ ձևավորվել են կիսանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային համակեցությունները:

Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Նկար 6




Մարզի անտառային հողերի մակերեսը կազմում է շուրջ 65հազ.հա, հանրապետության ընդհանուր անտառածածկի շուրջ 20 % - ը:

Բուսական աշխարհ: տարածաշրջանի բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ բնույթ, ֆլորան հիմնականում ծառաթփային և տարախոտային է: Բուսական աշխարհը ՀՀ մյուս ֆլորիստիկ շրջանների համեմատ բազմազան է՝շուրջ 2000 -2500 բուսատեսակ՝ անոթավոր բույսեր՝ որոնք ներկայացված են մի շարք հազվագյուտ, անհետացող և էնդեմիկ բուսատեսակներով, մշակաբույսերի վայրի ցեղակիցներով, այլ օգտակար բույսերով՝ սևնդային, դեղաբույսեր, գեղազարդային, տեխնիկական և այլն:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն և լեռնամարգագետնային հողերի վրա ձևավորվել են անտառային և ալպյան բուսատեսակները:

Նկար 7



Տարածքի մարզագետնային բուսականությանը բնորոշ են տարախոտա-բոշխային (գորգեր) բուսածածկի տիպերը: Խոտաբույսերից հանդես են գալիս գագեր, փետրախոտեր, շյուղախոտեր, աբեղախոտեր:

Ցածրադիր հատվածներում հանդիպում է գիհու խառը նոսրանտառը: Հանդիպում են Արևելյան կաղնի(*Quercus macrantera*), Վրացական թխկի (*Acer ibericum*), Իլենի(*Lonicera*), Մասրենի(*Rosa*) և այլն:

Տարածքը ներկայացնում է Մեղրիի ֆլորիստիկ գոտին, որտեղ հանդիպում են հազվագյուտ և անհետացող մոտ 115 տեսակներ:

Բուսականության տարածումը հիմնականում պայմանավորված է բարձունքային գոտիականությամբ, պայմանավորված է ռելիեֆի միկրոկլիմայական, հողային, ջրաբանական և այլ առանձնահատկություններով: Իրար հաջորդում են կիսաանապատային, լեռնաանտառային, լեռնատափաստանային, մարզագետնատափաստանային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտները / բուսական տիպերը: Անտառային բուսականությունը տեղաբաշխված է ծովի մակերևույթից 500 մետրից մինչև 2300-2500մետր: Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են կաղնին և գիհին, իսկ ոչ մեծ տարածվածությամբ բոխին, սոճին, հունական ընկուզենին, անտառային խնձորենին և այլն:

Կաղնու ծառուտները տեղաբաշխված են 3 գոտիներով՝ արաքսայան կաղնին մինչև

1200մ, վրացական կաղնին՝ մինչև 1500մ և արևելյան կաղնին մինչև 2500մ ծովի մակերևույթից բարձրությունների վրա: Հիմնականում գերակշռում է մարգագետնատափաստանային և տափաստանային բուսականությունը:

Թփատեսակներից տարածված են հոնին, սզին, տխլենին, մասրենին և այլն: Վայրի պտղատուներից ոչ մեծ տարածվածությամբ հանդիպում են խնձորենին, տանձենին, շլորենին, ընկուզենին և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են 94 բուսատեսակ, որից կրիտիկական վիճակում են գտնվում 20-ը, մասնավորապես՝ Գազ Պրիլիպկոյի(*Astragalus prilipkoanus* Grossh.), Գազ Բեկված(*Astragalus refractus* C. A. Mey.): ՀՀ կարմիր գրքում գրանցված են՝ Վարդակակաչ Սոսնովսկու (*Tulipa sosnovskyi* Achverdov & Mirzoeva), Բանպոս Նիզականամու (*Polystichum lonchitis* (L.) Roth), Սարդակիր մեղվակիր(*Ophrys apifera* Huds.), Խոլորձ կետավոր(*Orchis punctulata* Steven ex Lindl.), Խոլորձ եռատամ(*Orchis tridentata* Scop.), Ոզնաթուփ Ֆեդորովի(*Acantholimon fedorovii* Tamamsch. & Mirzoeva), Սոսի արևելյան (*Platanus orientalis* L.) և այլն:

Խոտածածկույթում գերակշռում են քսերոֆիլ տեսակները և էֆեմերները, մասնավորապես՝ Կուսածաղիկ խոտայի(*Vinca herbacea*), Սինդրիկ արևելյան(*polygonatum orientale*), ճանկխոտ արևելյան(*Ajuga orientale*), Բանգի սև(*Hyoscyamus niger*), Երեքնուկ կարմիր(*Trifolium hybridum*), Խատուտիկ դեղատու(*Taraxacium officinalis*), Ճարճատուկ սովորական(*Cichorium intybus*), Անանուխ երկարատերև(*Menha longifolia*), Սիբեխ սովորական(*Falcaria vulgaris*), Մոշենի թխակապուլտ(*Rubus caesius*) և այլն:



Նկար 8. Գազ Պրիլիպկոյի խոզանատերև

Նկար 9.Տափուռ



Նկար 10.Վարդակակաչ Սոսնովսկու

Բուսական աշխարհի Կարմիր գրքում գրանցված տեսակներից «Արևիք» ազգային պարկում հանդիպում են չորապտեր արծվապտերայինը, Գրիֆթի հուղայածառը, վայրի ձմերուկը, անմեռուկ կլորատերևը, կատվադաղձ լերդախոտատերևը, թրաշուշան աղատերը, սագասոխուկ ցողունավորը, սարդակիր կովկասյանը, խոլորձ Շելկոնովիկին,

սարդակիր կովկասյանը և այլն:


Կենդանական աշխարհ.Սյունիքի մարզում հայտնի է անողնաշարավոր կենդանիների 70, միջատների 20 կարգ: Ներկայացված են նաև փափկամարմիններ, սարդակերեր, բազմոտանիներ, խեցգետնակերպեր, միջատներ: Տարածաշրջանի կենդանական աշխարհը հարուստ է էնդեմիկ անողնաշարավոր տեսակներով, այդ թվում՝ ծղրիդներ, մորեխներ, բզեզներ, երկթևանիներ, փափկամարմիններ, սարդեր:

Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիներից՝ լճագորտը, ժայռային մողեսը, սովորական լորտուն, թռչուններից՝ մոխրագույն ագռավը, կաչաղակը, կաթնասուններից՝ գայլ, աղվես, աքիս, անողնաշարավորներից՝ մեղու, մորեխ, որոշ կապտաթիթեռներ և այլն: Մողեսներից հանդիպում են դեղանափորիկը(*Pseudopus apodus*), իլիկամողեսը(*Anguis fragilis*), Ռադդեի ժայռային մողեսը(*Darevskia raddei*), օձերից՝ Կույր օձը(*Typhlops vermicularis*), ջրային լորտուն (*Natrix tessellata*) Արևմտյան վիշապիկը(*Eryx jaculus*), Կարմրափոր սահնօձը(*Hierophis schmidti*), Գյուրգան(*macrovipera lebetina*), Հայկական իժը(*Vipera (Montivipera) raddi*), Լճագորտը(*Peophilax ridibundus*), Կանաչ դողոշը(*Bufo viridis*)և այլն: Կաթնասուններից տարածված է գայլը(*Canis lupus*), Աստառային կատուն(*Felis silvestris Scherber*), գորշ արջը(*Ursus arctos Linnaeus*), Լուսան(*Linx linx L.*), Մեծ պայտաքիթ չղջիկ(*Rhinolophus ferrumequinum Schreber.*), Եվրոպական նապաստակ(*Lepus europaeus Pall.*), ընձառյուծը (*Pantera pardus*), բեզարյան այծը(*Capra aegagrus Erleben*), Հայկական մուֆլոնը(*Ovis orientalis gmelinii*)և այլն:

Ձկնատեսակներից գետերում տարածված են արևելյան տարեխ, կողակ և այլ ձկնատեսակներ: Ողջի գետի վերին հոսանքում գրանցված է ձկան միայն մեկ տեսակ՝ կարմրախայտ (*Salmo trutta morfa fario*), որը գնալով անհետանում է:Այլ հատվածներում հանդիպում են տառեխիկը (*Alburnoides bipunctatus*), քունի բեղլու (*Barbus lacerta cyri*), քունի կողակ (*Varicorhinus capoeta capoeta*):

Քաջարանի շրջակայքի լեռնատափաստանային գոտուն բնորոշ են երկկենցաղների երեք տեսակներ՝ կանաչ դողոշը (*Bufo /Pseudopedalia/ variabilis*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), և լճագորտը (*Pelophilax ridibundus*):

Սյունիքի մարզում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված 8 թռչնատեսակներ՝ Մեծ ենթարծիվ(*Aquila clanga Pallas*), Կովկասյան մարեհավ(*Tetrao macrocnemis*), Տափաստանային հողմավար բազե(*Falco nanumanni Fleischer*), Անապատային կաքավ(*Ammoperdix griseogularis*), Ալպիական ճայ(*Pyrrhorax graculus*), Սև փայտփոր (*Druocopus matrius*)և այլն: Ձկնատեսակներից Հայաստանում էնդեմիկ տեսակ է Տառեխիկը (*Alburnoides bipunctatus*): Հանդիպում են նաև ճպուռ մարինա (*Orthetrum sabina (Drury)*), Ֆալետիի կողընջակեր ցայտազնայուկ(*Carabus (Procerus) scabrosus fallettianus Cavazzutti*), Սևազլուխ չրիսկան (*Drasterius atricapillus (Germar)*), Կապանյան երկարաբեղիկ(*Cortodera kaphanica Danilevsky in Danilevsky&Miroshnikov*), թիթեռներից՝ Ապոլոն(*Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko*), Բրենթիս (*hünBrenthis ino schmitzi Wagener*), Անտսված կապտաթիթեռ(*Agrodiaetus neglectus Dantchenko*), սողուններից՝ Հայկական իժ կամ Ռադդեի իժ(*Vipera (Montivipera) raddei Boettger*), միջատակերներից՝ Շելկովիկովի կուսուկրա(*Neomys schelkovnikovi Sat.*), Մացառախոզ(*Hystrix indica Kerr*) և այլն:



Նկար 11. Կապանյան երկարաբեղիկ

Նկար 12. Ապոլոն

«Արևային» Ազգային պարկն ունի նաև հարուստ կենդանական աշխարհ: Այստեղ հանդիպում են առաջավորասիական ընձառյուծը, բեզդարյան այծը, հայկական մուֆլոնը, միջերկրածովային կրիան, հայկական իժը, կովկասյան ջրասամույրը, կասպիական հնդկահավը, կովկասյան մայրեհավը և այլն:

Հատուկ պահպանվող տարածքներ. տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքներ են.

- «Չանգեզուրի կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ,
- «Խուլստուփ» արգելավայր,
- «Չանգեզուր» պետական արգելավայր,
- «Բողաքար» պետական արգելավայր,
- «Շիկահող» Պետական արգելոց:

«Չանգեզուրի կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ. համաձայն ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշմամբ՝ «Շիկահող» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «Արևիք» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միաձուլվել և վերակազմակերպել են, ստեղծելով «Չանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ դրանում ներառելով «Արևիք» ազգային պարկը, «Շիկահող» պետական արգելոցը, «Սոսու պուրակ», «Չանգեզուր», «Խուլստուփ», «Բողաքար» և «Սև լիճ» պետական արգելավայրերը՝ վերը նշված տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման ապահովման, ինչպես նաև ազգային պարկի, արգելոցի և արգելավայրերի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովման նպատակով:

«Արևիք» ազգային պարկը ստեղծվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N1209-Ն որոշմամբ: Մակերեսը կազմում է 34401.8հա:

Ազգային պարկի տարածքում ներկայացված են լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձալայան տիպի լանդշաֆտը: Տարածքում առկա են ուղղաձիգ բնական գոտիներ և լանդշաֆտների տարբեր տեսակներ ալպյան մարգագետիններ, լեռնային տափաստաններ, անտառային զանգվածներ, կիսաանապատներ, պայմանավորված են ուղղաձիգ գոտիականությամբ և լեռնաշղթաների դիրքադրությամբ: Պարկի կլիմայական պայմանների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողնում տարածքի բարձրությունները ծովի մակերևույթից,

գետահովիտների և գոգավորությունների մորֆոլոգիական առանձնահատկություններն ու պարփակվածությունը:

«Արևիք» ազգային պարկի ստեղծման նպատակն է Չանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերի, ինչպես նաև Մեղրի, Շվանիձոր Նյուվադի գետերի ջրահավաք ավազանների տարածքներում բնական էկոհամակարգերի, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, բնական պաշարների, բնության եզակի հուշարձանների, էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային բնակության միջավայրերի պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումը:

Այստեղ առկա են և հատուկ ուշադրության առարկա են վայրի բնության հազվագյուտ և ոչնչացող տեսակները: Պարկում հայտնաբերվել է զուլավոր բորենի, որը գրանցված է Հայաստանի Կարմիր Գրքում:



ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշմամբ «Արևիք» ազգային պարկը ներառվել է «Չանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում: Նախատեսվող գործունեության տարածքը ներառում է «ՉԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի «ԱՐՎԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ Բողաքար գետի ձախ ափին հարող ոչ անտառապատ տարածքը:

Պատմամշակութային հուշարձաններ. Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի վարչական տարածքի համար հուշարձանների ցանկը՝

8.5 Ծ՝ ԾՅÆ ù՞Օ ³ ù
Աղյուսակ 8

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

1		²Ô´ Úàðð	19 ¹. 2-ñ¹ Ī »ë	Ø»Í Æ³Õ áðÛ ö³ ñ³ Û³ ½Ç÷á Õ.	î	1.1
2		²Øð àð Ø°Ô ðÆ (Ø°Ô ðàð ´ °ð,)	10 ¹. í»ñ ç-11 ¹. ëĪ Ç/µ	Ø»Í Æ³Õ Ç Ñë Ī áÕùðÛ	Ð	1.2
	2.1	²ßĪ ³ ñ³ Ī	18 ¹.	Ø»Í Æ³Õ Ç Ñë-³ » Ī áÕùðÛ	Ð	1.2.1
	2.2	²ßĪ ³ ñ³ Ī	18 ¹.	Ø»Í Æ³Õ Ç Ñë-³ » Ī áÕùðÛ	Ð	1.2.2
	2.3	²ßĪ ³ ñ³ Ī	18 ¹.	Ø»Í Æ³Õ Ç ³ Û Ī áÕùðÛ	Ð	1.2.3
	2.4	²ßĪ ³ ñ³ Ī	18 ¹.	Ø»Í Æ³Õ Ç Ñë-³ Û Ī áÕùðÛ	Ð	1.2.4
	2.5	²ßĪ ³ ñ³ Ī	18 ¹.	Ø»Í Æ³Õ Ç ³ Û Ī áÕùðÛ	Ð	1.2.5
	2.6	²ßĪ ³ ñ³ Ī	18 ¹.	Ø»Í Æ³Õ Ç Ñë-³ Û Ī áÕùðÛ	Ð	1.2.6
3		¶°ð° ¼Ø²Û àð	18-20 ¹¹.	Ø»Í Æ³Õ Ç ³ » »½ñÇÝ, · áÛ»ñÇ ÙáĪ ·ĪÝ íá Õ »Ī»Õ»áðó 200 Û Ñë³»	î	·áñ Í áÕ (1.23)
4		Ê²âð²ð	1624 Æ.	ö áùñ Æ³Õ áðÛ Ñ»Ý³ Í ÷ Ø»ÆÉáðÛ³Ý ÷ áÕ. 19 Ī³ Ý á³ ĪÇ Ý	Ð	2.12.1
5		°Ī °ÔðÆ	17-18 ¹¹.	ù³Õ³ ùÇ Ñë-³ » »½ñÇÝ, ö áùñ Æ³Õ áðÛ · áÛ»ñÇ ÙáĪ	Ð	3: °Ý Æ³ Ī³ Û áð ÆÛ³Ûµ Ý»ñĪ³ Û ó- Ī³ Í ÷ 1 Ñáðß³ñ Ó³Ý (3.1)

6		<p>Đàôp²δÒ ²Û Û°ð Û²Ê ÎÆÛ ð² Ûø .. Î² È°ð ¶ ÛáðÔ°ðÆ</p>			5
	6.1	¶ »ñ»½Û³Ýáó	10-18 11.	Ý³ ÈĪ ÇÝ ð³Ý ù Đ ·ÛáðÇ Ñë-³ » Û³ éáðÛ	5.1: °Ý Æ³ Ī³ Ûáð ÃÛ³Ûµ Ý»ñĪ³ Û ó- ð³ Í ÷ 1 Ñáðð³ñ Ó³Ý (5.1.1)
	6.2	¶ »ñ»½Û³Ýáó	13-17 11.	Ý³ ÈĪ ÇÝ ð³Ý ù Đ ·ÛáðÇó 500 Û Ñë, ÉùĪ³Í Î³ É»ñ·ÛáðÇ ð³Ý áÕ x³ Ý³ - á³ ñÑÇó ³ Ç, Î³ É»ñ ·»Ī³ Ç Ó³È ³ ÷ ÇÝ	5.2: °Ý Æ³ Ī³ Ûáð ÃÛ³Ûµ Ý»ñĪ³ Û ó- ð³ Í ÷ 1 Ñáðð³ñ Ó³Ý (5.2.1) ·áñÍ áÕ (5.3): °Ý Æ³ Ī³ ÛáðÛ³Ûµ Ý»ñĪ³ Û³óĪ³ Í ÷ 1 Ñáðð³ñ Ó³Ý (5.3.1)
	6.3	¶ »ñ»½Û³Ýáó	17-20 11.	Ý³ ÈÇÝ ð³Ý ù Đ ·ÛáðÇó ÛáĪ 4 Ī Û Ñë³ », ÉùĪ³Í Î³ É»ñ·ÛáðÇ Ñë »½ñÇÝ	
	6.4	¶ ÛáðÕ»ÕÇ §Ûáðð³Ýó!	16-20 11.	Ý³ ÈĪ ÇÝ ð³Ý ù Đ ·ÛáðÇó ÛáĪ 4 Ī Û Ñë³ », ÉùĪ³Í Î³ É»ñ·ÛáðÇ Ñë Û³ éáðÛ §Ûáðð³Ýó ÓñĪ -áðÛ	5.4
	6.4.1	¶ »ñ»½Û³Ýáó	16-20 11.	§Ûáðð³Ýó ÓñĪ -Ç Đ ³ Ç Ī áÕÛáðÛ »Ī »Õ»áðóÑë	5.4.1
	6.4.2	°Ī »Õ»Ç	17 ¹.	·ÛáðÕ Ī»ÕÇ Ç Ñë Đ Û³ éáðÛ	5.4.3

6. 4. 3	Ê³ äù³ñ	9 ¹.	Èùí³í Ì³ É»ñ Ð ·ÙäðÇó Ùäí 600 Ù Ñë³ Ù, §Ûáäð³Ýó Óñí -Ç Ó³Ë Ĩ áÕÙäðÙ ¹³ ÌÇ Ù»ç	Ð	5.4.4
6.5	Ì³ Ùäðñç	17 ¹.	Ý³ Èĭ ÇÝ ĩ³Ý ù Ð ·ÙäðÇó Ùäí 500 Ù Ñë³ », Ĩ³ É»ñ ·»ĭ³ Ĩ Ç ĭñ ³	Ð	5.7
6.6	Ì³ Ùäðñç	17¹.	Ý³ Èĭ ÇÝ ĩ³Ý ù Ð ·ÙäðÇó 2 Ĩ Ù Ñĭ - ³ Ù, ·ÙäðÕ ĩ³Ý áÕ x³ Ý³ á³ ñÑÇ èĭ ½µ³ Ù³ éáðÙ	Ð	5.8
6.7	Ì³ Ùäðñç	19-20 ¹¹.	Ý³ Èĭ ÇÝ ĩ³Ý ù Ð ·ÙäðÇó 2 Ĩ Ù Ñĭ - ³ Ù, ·ÙäðÕ ĩ³ ÝáÕ x³ Ý³ á³ ñÑÇ èĭ ½µ³ Ù³ éáðÙ Ý³ Èáñ¹Çó Ùäí 20 ÙÑĭ	Ð	5.9
6.8	Ðáðð³ñÓ³Ý °ñĭñá ñ¹ ³ ÌË³ñÑ³ Ù³ ñĭá ðÙ ½áÑ³ ĭÝ»ñÇÝ	1968 Ă.	Ý³ Èĭ ÇÝ ĩ³Ý ù ĭ ·ÙäðÇó Ùäí 4 Ĩ Ù Ñë³ », Èùí³í Ĩ³ É»ñ ·ÙäðÇ Ñë- ³ Ù»½ñÇÝ	ĭ	5.10
6.9	Ðáðð³ñÓ³Ý °ñĭñá ñ¹ ³ ÌË³ñÑ³ Ù³ ñĭá ðÙ ½áÑ³ ĭÝ»ñÇÝ	1982 Ă.	Ý³ Èĭ ÇÝ ĩ³Ý ù ĭ ·ÙäðÇ Ĩ »Ýĭñ áÝáðÙ »ĭ »Õ»áðó Ùäí 15 Ù³Ù	ĭ	5.11

Բնության հուշարձաններ. ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 56 բնության հուշարձաններ, որից 20-ը՝ երկրաբանական, 16-ը՝ ջրաերկրաբանական, 13-ը ջրագրական, բնապատմական՝ 4 և 3-ը՝ կենսաբանական: Բնության հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը,

Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռեյկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, Մթնածորի անտառը: Պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են Չորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Բաղաբերդի, Յալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը: Մարզի տարածքում են գտնվում «Շիկահող» պետական արգելոցը, «Արևիք» ազգային պարկը, «Չանգեզուր», «Խուստուկ», «Բողաքար» բնության հուշարձանները :

Քաջարան քաղաքի մոտ են գտնվում հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 9

	Երկրաբանական հուշարձաններ	Տեղադիրքը
1.	«Անանուն» ռեյիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին:
	Ջրագրական հուշարձաններ	
2.	«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Չանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա;
3.	«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա:
4.	«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա

Նախատեսվող գործունեության տարածքում չկան բնության հուշարձաններ:

Սոցիալ-տնտեսական. ՀՀ Սյունիքի մարզը գրավում է ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունի բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանում է հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը: Մարզը զբաղեցնում է 4506կմ² տարածք: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ճյուղերն են արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Համաձայն ՀՀ վիճակագրության Կոմիտեի կայք էջի՝ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 134,6 հազար մարդ: Գյուղնշանակաւթյան հողերը կազմում են 306003,6հա, որից վարելահողերը՝ 43860,4հա:

Աղյուսակ 10

Տարածքը Territory	4 506 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	15.2
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2023	7
Քաղաքներ Towns	7
Գյուղեր Villages	132
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of 2023	134.6 հազ. մարդ/ ths. person
<i>այդ թվում` including:</i>	
քաղաքային urban	90.2 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	44.4 հազ. մարդ/ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ., % Share of marz population in the total population of the RA 2022, %	4.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ., % Share of urban population size 2022, %	67.0
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	306 003.6 հա/ ha
այդ թվում` վարելահողեր including: arable land	43 860.4 հա/ ha

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թ. զարգացման ռազմավորության՝ Սյունիքի մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են գունավոր մետաղների (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր և թանկարժեք (ոսկի, արծաթ) հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների՝ մարմարի, գրանիտի, բազալտի, տուֆի, պերլիտի և այլ հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը: Լեռնահանքային արդյունաբերության առավել խոշոր կազմակերպություններն են՝ «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ, «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 18.8 %
- գյուղատնտեսություն 6.4 %
- շինարարություն 8.9 %
- մանրածախ առևտուր 2.1 %
- ծառայություններ 1.6 %

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի, բանջարեղենի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծում և անասնաբուծական մթերքի արտադրություններ) մեջ: Սյունիքի մարզի բարելավման կարիք ունեցող գյուղատնտեսական նշանակության հողերի գերակշիռ մասը քարքարոտ և թափոններով աղտոտված հողերն են:

Միջպետական և մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասն անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունը էապես ավելանում է: Մարզի տարածքում զարգացած է բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը, գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաճյուղերը: Մարզով

են անցնում Մ-2 Երևան-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետություն միջպետական ճանապարհը, Իրան - Հայաստան գազատարը: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են Էլեկտրական ցանցերին և ապահովված են Էլեկտրամատակարարմամբ: Սյունիքի մարզում է գտնվում Մեղրու սահմանային անցակետը:

Մարզում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ: Մարզի զբոսաշրջային ներուժի զարգացմանը նպաստում է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությունը՝ անտառները, լեռները, պատմամշակութային և բնության հուշարձանները, բուժիչ ջրաղբյուրները, ինչպես նաև ենթակառուցվածքների առկայությունը: Հատկապես 5,7կմ երկարության Տաթևեր ճոպանուղու շահագործումը լրացուցիչ խթան հանդիսացավ զբոսաշրջության զարգացման համար:

Մարզում գործում են նախադպրոցական ուսումնական հաստատություն, դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, 1 ԲՈՒԿ, 3 ԲՈՒՀ-ի մասնաճյուղեր, գործում է 2 թատրոն, 4 թանգարան, 129 գրադարան:

Մարզի բոլոր բնակավայրերն ունեն կայուն ջրամատակարարում և կոյուղու համակարգ, սակայն մաքրումն իրականացվում է միայն Քաջարան քաղաքում, որը սպասարկում է մարզի բնակչության 5%, մնացած քաղաքների կոյուղին միացված է հոսող գետերին, լցվում մոտակա ձորերը՝ աղտոտելով շրջակա միջավայրը: Աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Գործազրկության մակարդակը ցածր է ՀՀ միջինից:

Մարզի հիմնախնդիրներից է պոչամբարների առկայությունը, դրանց ծավալների շարունակական աճը, քաղաքների և բնակավայրերի, ճանապարհների հիմնանորոգումը փողոցային լուսավորությունը, արտագաղթը, աղտոտվող շրջակա միջավայրը, կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանների վատ վիճակը և բացակայությունը, բժշկական ծառայությունների հասանելիությունը և այլն:

Կապան քաղաքը Սյունիքի մարզկենտրոնն է, գտնվում է Խուստուկի լեռան ստորոտում, Երևան քաղաքից 301կմ հեռավորության վրա: Մշտական բնակչության թվաքանակը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 41,3հազ. մարդ: Տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռող հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, այլումինե և մետաղապլաստե իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և Էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Մեղրի համայնք. Մեղրի խոշորացված համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավային մասում և կազմավորվել է 2016 թվականի սեպտեմբերին ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի բոլոր 13 համայնքների խոշորացման արդյունքում՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀՀՕ-100-Ն օրենքով: Այն ընդգրկում է Մեղրի և Ագարակ քաղաքային, ինչպես նաև, Ալվանք, Այգեձոր, Գուղեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն գյուղական բնակավայրերը: Մեղրի քաղաքը գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ: Չբաղեցնում է 65992.77հա մակերես: Մեղրի համայնքը տարածվում է հյուսիսային լայնության 38050'–39007' և արևելյան երկայնության 46004'-

46032' միջև:

Տարածքի առավելագույն ձգվածությունն արևելքից արևմուտք 37 կմ է, իսկ հյուսիսից հարավ՝ 29 կմ: Ամենացածր կետը գտնվում է Արաքս գետի և ՀՀ արևելյան սահմանի հատման տեղում (374 մ.ծ.մ.), իսկ ամենաբարձրը՝ Չան գետուրի լեռնաշղթայի Փառական գագաթն է (3826 մ.ծ.մ.), որը գտնվում է Չանգեզ ուրի և Մեղրու լեռնաշղթաների հանգուցակետում: Մեղրի համայնքը բնութագրվում է բարդ ռելիեֆով, խիստ կտրտվածությամբ և մասնատվածությամբ: Այդ պատճառով կլիման բազմազան է՝ չոր մերձարևադարձայինից՝ մեղմ ձմեռներով և շոգ ամառներով, մինչև բարձր լեռնային ցուրտ կլիմա: Գերակշռող բարեխառն ցամաքային կլիման է:

Տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռում է՝ խղճի, ոսկու, մոլիբդենի, գրանոդիորիտների մշակող արդյունաբերությունը ինչպես նաև կահույքի ու շինանյութերի, հրուշակեղենի, պահածոների, խմիչքի արտադրությունը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են պտղաբուծությունը և մեղվաբուծությունը: Գյուղատնտեսության հիմնական ուղղություններից է խաղողի սեղանի տեսակների և մերձարևադարձային պտուղների մշակությունը: Մեղրու նուռը, թուզը հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլ դրա սահմաններից դուրս: Վերջին շրջանում այստեղ սկսել են աճեցնել նաև կիվի, ֆեյխոա, բանան և պիստակ: Մեղրի համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտները հիմնականում կենտրոնացված են Մեղրի և Ագարակ քաղաքներում:

2023թ. տարեսկզբին բնակչությունը կազմում է 4.1 հազ. մարդ: Մեղրի քաղաքում է գտնվում 17-րդ դարի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, Անապաստանաց վանք և Սուրբ Հովհաննես եկեղեցի, Ամրոց Մեղրի (6 աշտարակներով): Առկա են նախադպրոցական, ուսումնական կրթարաններ, արվեստի դպրոց: Գործում է «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ Առողջապահական միակ հիմնարկը: Հիմնախնդիրներից է շենքերի, փողոցների, դպրոցների, մանկապարտեզների, մշակույթի տան հիմնանորոգումը, ծառուղիների, այգիների, մայրերի ստեղծումը, գյուղատնտեսական արտադրանքի իրացումը, զբոսաշրջային ներուժի ոչ ռացիոնալ օգտագործում և համապատասխան ենթակառուցվածքների սակավությունը, շուրջօրյա ջրամատակարարումը, Վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարների առկայությունը և այլն:

Վարդանիծող գյուղը գտնվում է Մեղրի գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից 1040-1140 մ բարձրության վրա: Հեռավորությունը Սյունիքի մարզի մարզկենտրոն՝ Կապան քաղաքից ճանապարհով կազմում է մոտ 62 կմ, իսկ Մեղրի քաղաքից հեռու է մոտ 6 կմ դեպի հյուսիս: Բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 160մարդ: Գյուղում չի գործում նախադպրոցական ուսումնական, մարզական հաստատություններ: Գյուղի տարածքում են գտնվում մ.թ.ա. 1-ին հազարամյակից մինչև միջնադար գործող ամրոցի ավերակներ, 16-18-րդ դարի գերեզմանոց, որտեղ կան նաև խաչքարեր, մասնավորապես 1651 թվականի կանգնեցված Խաթունի, և 1551 թ.՝ Միքայելի խաչքարերը, ինչպես նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակից մինչև միջնադար գործող հանքախորշերը, կա 17-րդ դարի անանուն եկեղեցի, մի շարք գյուղատեղիներ՝ Փուշկազ, Խումարան, Լսավանք, Տերտերասար: Գյուղի պատմական հուշարձաններից է համարվում նաև Թխկուտի եկեղեցին: Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

անասնապահությունը, դաշտավարությունը:

Թխկուտ բնակավայրը գտնվում է Մեղրի գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից մոտ 1200 մ բարձրության վրա: Հեռավորությունը Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապան քաղաքից ճանապարհով կազմում է մոտ 60 կմ, իսկ Մեղրի քաղաքից հեռու է մոտ 9 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Գյուղի մոտ կա պղնձամոլիբդենային հանքավայր: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 51 մարդ:


Այգեծոր գյուղ. գտնվում է Մեղրի գետի աջ ափին՝ ծովի մակարդակից մոտ 1120 մ բարձրության վրա: Հեռավորությունը Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապան քաղաքից ճանապարհով կազմում է մոտ 61 կմ, իսկ Մեղրի քաղաքից հեռու է մոտ 8 կմ դեպի հյուսիս-արևմուտք: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչությունը բացակայում է: Բնակչությունը զբաղվում էր անասնապահությամբ և հողագործությամբ:

5. Նախատեսվող գործունեության նկարագիրը, հզորությունները, ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը(շինարարության և շահագործման, փակման փուլ).

Անտառապատման աշխատանքներն իրականացվում են այն հողատարածքներում, որտեղ նախկինում ծառեր չեն եղել: Ծառատնկումը կատարվելու է այն բուսական կազմով, որը մոտ կլինեն բնական անտառների, ելևելով տեղանքի հողակլիմայական պայմաններից:

Տեխնիկական ցուցանիշները.


Անտառապատման աշխատանքներ.



Հողի նախապատրաստում. Հողի նախապատրաստումը նախատեսվում է իրականացնել ինչպես փոսերով ձեռքով, այնպես էլ տեխնիկայով խրամատավորումներ: Սխեմա N1 և N2 հողակտորներում (6,7հա, խրամատներով)

Սխեմա 1,2

Սխեմա N2 (N1 և N2 հողակտորներ՝ 6,7հա)



Պայմանական նշաններ

Ծառատեսակներ

Գլխավոր

● Ընկուզենի

Ուղեկցող

● Խնձորենի

● Կեռասենի

● Սալորենի


● Տանձենի

● Տիպենի

● Բայենի

Սխեմա N3 և N4 հողակտորներում (1,7հա, փոսերով)

Սխեմա N3 (N3 և N4 հողակտորներ՝ 1,7հա)



Պայմանական նշաններ

Ծառատեսակներ

Գլխավոր

● Ընկուզենի

Ուղեկցող

● Խնձորենի

● Կեռասենի

● Սալորենի

● Տանձենի

● Տիպենի

● Բայենի

Անտառաշակույթների հիմնում. Տնկանյութ. Ընտրված ծառատեսակները.
 Ծառատեսակներն ընտրվել են կենսոլորտի անտառագետի հետ համատեղ

քննարկումների արդյունքում տեղանքին բնորոշ պտղատու ծառատեսակներից:

Անտառապատման աշխատանքների իրականացման համար որպես գլխավոր ծառատեսակ նախատեսվում է օգտագործել ընկուզենու (Júglans), որպես ուղեկցող՝ տանձենու (Pyrus), խնձորենու (Malus), սալորենու (Prunus), բալենու (Cerasus), կեռասենու (prunus avium), տխլենու (Corylus) տնկիներ: Քանի որ տարածքն իրենից ներկայացնում է նոսրուտ, ապա տնկումը նախատեսվում է կատարել խառը սխեմայով`

- 1 հա – հաշվով օգտագործելով 3000 հատ տնկի, որից ընկուզենի 800հատ, խնձորենի 400հատ, տանձենի 400հատ, սալորենի 400հատ, բալենի 400հատ, կեռասենի 400հատ, տխլենի 200հատ:
- Անտառապատման համար կպահանջվի ընդամենը 25200 հատ տնկանյութ, որից ընկուզենի 6720, խնձորենի 3360, տանձենի 3360, սալորենի 3360, բալենի 3360, կեռասենի 3360, տխլենի 1680:
- **Հիմնադրման հաջորդ տարում նախատեսվում է իրականացնել անտառմշակույթների լրացման աշխատանքներ:**

Լրացման աշխատանքները կատարվում են տնկումից հետո տնկարկների գույքագրման արդյունքների հիման վրա, եթե տնկիների կաչողականությունը բավարա չէ: Անտառմշակույթների լրացման համար կպահանջվի 1-2մ բարձրության 6300 հատ տնկանյութ, որից ընկուզենի՝ 1680հատ, խնձորենի՝ 840հատ, տանձենի՝ 840հատ, սալորենի՝ 840հատ, բալենի՝ 840հատ, կեռասենի՝ 840հատ, տխլենի՝ 420հատ :


Անտառմշակույթների հիմնման եղանակ. խնամք. Անտառնյութերի հիմնման համար կատարվելու են տարածքի տեղանշումներ, տնկումը կատարվելու է խրամատային եղանակով, փոսերի փորում ձեռքով, խրամատների պատրաստում պլանտաժային գուբանով: Խրամատների պատրաստումը նախատեսվում է գուբանով՝ գուբանի մեկ երկթևանի խուփով, քանի որն այն ավելի արագ և քիչ ծախսատար մեթոդ է: Խրամատի խորությունը և լայնությունը կարելի է կարգավորել ըստ նպատակահարմարության:

Կատարվելու է ագրոտեխնիկական խնամք տարեկան 3-4 անգամ, միջշարքերի մեքենայացված խոտհունձ, դաշտամսների դեմ պայքարի աշխատանքներ: Հիմնադրման հաջորդող 7 տարիների ընթացքում մինչև անտառմշակույթների անտառի շարք փոխադրելը նույնպես նախատեսվում է իրականացնել ագրոտեխնիկական խնամքի և խոտհունձի աշխատանքներ: Չորացած ճյուղերի, բնաշիվերի հատումը կատարվում է ձեռքով, ելնելով տարածքի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումից:

Բույսերի սնկային հիվանդությունների/ֆունգիցիտների/ և վնասատուների /ինսեկտիցիդներ/հիվանդությունների դեմ պայքարի պայքարի նպատակով կատարվելու է քիմիական միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրվող քիմիական նյութերի կիրառմամբ, ցողային սրսկման եղանակով:

Նախագծային լուծումներն/տեխնոլոգիական քարտերը/ ավելի մանրամասն ներկայացված է աշխատանքային նախագծում:


Անտառվերականգնման տարածքի հողատեսքը. Անտառապատման համար ընտրված տարածքն իրենից ներկայացնում է նոսրուտ




Ճառատնկումը կատարվելու է ԱՊ-ի բնապահպանական վարելահողերում պտղատու այգու տեքով:

Լանջի միջին թեքությունը կազմում է 15°, լանջերի հիմնական կողմնադրությունը՝ արևելյան և հարավ-արևելյան:

Նկար




Նկար 13, 14




Հետազոտման տարածքն ըստ ծովի մակարդակից բարձրությունների.

Նկար 15



Ցանկապատում. Հիմնադրվող անտառմշակույթների պահպանության նպատակով նախատեսվում է կառուցել ցանկապատ՝ 4000գծմ երկարությամբ:
Գծապատկեր 3



Անտառային տնտեսություն վարող կազմակերպության հետ քննարկման արդյուքնում նախատեսվել է ընդհանուր թվով 6 ուղեփակոցների տեղադրում, որից երեքը

մակերեսով ամենամեծ՝ արևելյան տեղադրության հողակտորում: Նախատեսվում է կառուցել 4000գծմ երկարության ցանկապատ, որի համար նախատեսվում է.

- 1,8մ 1330 հատ հենասյունների պատրաստում
- ցանկապատի տարածքի տեղաձևում և փոսերի փորում հենասյունների տեղադրման համար(0,35*0,35մ 0,5մ)
- 25600գծմ փշալարի ձեռք բերում
- 22.4խմ ծավալի շինափայտի ձեռք բերում:

Ցանկապատի վրա տեղադրվելու է երկկփեղկանի փայտե դարպաս:

Չի նախատեսվում գործունեության ամբողջ տարածքի ցանկապատում, քանի որ այն կարող է խաթարել վայրի կենդանիների տեղաշարժին, միգրացիոն ուղիների և բնակմիջավայրի սահմանների խաթարմանը: Ցանկապատման ընթացքում պահպանվելու է հողակտորների միջև գրունտային ճանապարհների անցանելիությունը:

Խողովակաշար. տարածքի ոռոգումը կատարվելու է պոլիէթիլենային՝ նվազագույնը 100մմ տրամագիծով պոլիէթիլենային խողովակներով: Նախատեսվում է խողովակների եզրերին տեղադրել փականներ՝ ոռոգումն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Պայմանականորեն առանձնացված առաջին խողովակը, որի երկարությունը կազմում է մոտ 202 մ նախատեսված է N2 հողակտորը ոռոգելու համար, երկրորդ խողովակը՝ մոտ 925 մ երկարության՝ N1, N3, N4 հողակտորների ոռոգումն ապահովելու համար: Երկրորդ խողովակի երկու միջևամասերում՝ N1, N3 նախատեսվում է տեղադրել եռաբաշխիչներ փականներով, ինչպես նաև ջրաչափեր հողակտորների ջրումն ապահովելու և ռացիոնալ կազմակերպելու, ջրի խնայողաբար օգտագործելու նպատակով: Խողովակաշարն անցկացվելու է վերգետնյա, ինքնահոս եղանակով:

Շահագործման փուլում անտառապատումը կնպաստի տարածքի ջրային և ջերմային բալանսի կարգավորմանը:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. անտառառնկման աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝

- բահեր
- պլանտաժային գութան
- բեռնատար
- խոտհնձի մեքենաներ:

Շին տեխնիկան և սարքավորումները կարող են լինել Կապալառու կազմակերպությանը կամ վարձակալվել այլ կազմակերպություններից:

Գործունեության իրականացման համար օգտագործվելու է գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:

Յողային աշխատանքներ. ծառերի տնկման, հենարանների հիմքերի տեղադրման համար իրականացվում են 120 մ³ ծավալի հողային աշխատանքներ:

Յողային զանգվածը պահվում է է տեղում՝ փորված փոսորակի եզրին և խառերը տնկելուց կամ հենասյունները տեղադրելուց հետո, անմիջապես կատարվելու է հետախոյզ: Յողի ավելցուկային քանակ չի առաջանալու:

Բարեկարգում. կատարվելու է թափոնների հեռացում, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյունների

եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով: Հենասյունների ամրացման համար օգտագործվելու է տեղանքում առկա քարերով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.
աշխատանքների կատարման տևողությունը կազմում է՝ 7 տարի:

6. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Նախատեսվող գործունեության շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև ջրցանման նպատակով:

Ջուր.

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Տնկման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում կիրականացվի ջրցանում՝ տնկիների կայչողունակության ապահովման, ինչպես նաև հողային աշխատանքների ժամանակ փոշու քանակների նվազեցման նպատակով: Ջրցանումը կիրականացվի տաք եղանակին՝ առանց տեղումների օրերին: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր:

Տնկման փուլից սկսած՝ տնկիների ոռոգման նպատակով կօգտագործվի Բողաքար գետի ջուրը, որը մատակարարվելու խողովակներով՝ համապատասխան Ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում: Հետագայում «Արևիք» ԱՊ դիմելու է Շրջակա միջավայրի նախարարություն Ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով:

Ըստ ուսումնասիրությունների՝ տարածքում նախատեսված անտառմշակույթների բարձր կայչողունակությունն ապահովելու համար 1հա-ի հաշվով կպահանջվի 3800մ³: **Ընդհանուր առմամբ 8,4 հա ընտրված տարածքում 229 օր վեգետացիայի տևողությամբ ոռոգման համար կպահանջվի մոտ 32000մ³ ջուր:**

Օգտագործվող նյութեր.

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը. հողովակներ՝ մետաղյա, պոլիէթիլենի ներկ, ձյութ, փայտանյութ,

Գործունեության իրականացման համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

Գործունեությունն իրականացվելու է Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում՝ «ՉԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈՂՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի «ԱՐԼԻԶ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի վրա:

Նախատեսվող գործողությունը նպատելու է բնական էկոհամակարգերի և շրջակա միջավայրի բարելամանը, ինչպես նաև տեղային մակարդակով մեղմելու է կլիմայի գլոբալ փոփոխությունը: Նախատեսվող գործունեությունը բնապահպանական միջոցառում է, որը նպաստելու է կենսաբազմազանության պահպանությանը, կենդանիների բնակմիջավայրերի ընդլայնմանը, հողաշերտերի երոզիայից և դեգրադացումից պաշտպանելուն, քամիների մեղմմանը, խոնավության և ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների նվազեցմանը և այլն:

Հաշվետվության շրջանակներում իրականացվել է գործունեության իրականացման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական կյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալների ուսումնասիրություն՝ օդային ավազանի ներկա վիճակը, կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքները, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաները և պայմանագրերը, ՀՀ Բույսերի և կենդանիների կարմիր գրքերը, հողային և ջրային ռեսուրսների վերաբերյալ ՀՀ օրենքագրքերը, բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները, հողաբուսաշերտի հեռացման, պահպանման կառավարության որոշումները, աշխատանքի անվտանգությանն ուղղված ՀՀ օրենքները, կառավարության որոշումները, առանձին գերատեսչությունների հրամանները, համայնքների սոցիալական իրավիճակի վերլուծությունը: Գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում:

Գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են.

- օդային ավազան արտանետումների
- Կենդանական և բուսական աշխարհի պահպանության
- Հողային և ջրային ռեսուրսների օգտագործման
- Թափոնների կառավարման
- Արտակարգ իրավիճակների առաջացման
- Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են

միայն հողային աշխատանքներ, որը ներառելու է փոսերի փորման, ոռոգման ջրի խողովակների անցկացման, տարածքի ցանկապատման աշխատանքերը:


7.1 Օդային ավազան. Օդային ավազան արտանետումների ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում՝ օդային ավազան ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, ինչպես նաև հողային աշխատանքների(փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով, ինչը կրում է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շահագործման փուլում գործունեությունն օդային ավազանի վրա բացասական ազդեցություն չունի: Այն ունի դրական միայն ազդեցություն, քանի որ ավելանալու է կանաչ զանգվածը՝ բարելավելով կլիման:

7.2. Հողային ռեսուրսներ.

Ըստ կադաստրային քարտեզագրական նյութերի հետ համադրման արդյունքներ՝ հետազոտման տարածքն իրենից ներկայացնում է բնապահպանական նպատակային նշանակության հողատեսք, որից վարելահող ջրովի՝ 1.43հա, պտղատու այգի՝ 1.8հա, անտառ՝ 5,17 հա: «Արևիք» ազգային պարկի տարածքում դաշտային հետազոտության ենթակա 8,4 հա մակերեսով հողատարածքն ըստ հողատիպի կրազուրկ անտառային դարչնագույն հողեր են: Տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1618-ից մինչև 1711 մ բարձրության վրա, 2°-ից 21° թեքությունների վրա: Տարածքն անտառածածկ չէ և չի մշակվում:

Նկար 16



Ըստ դաշտային հետազոտության, հողատարածքի մակերեսը հիմնականում զերծ է քարերից, հողային կտրվածքը համասեռ է, զերծ՝ ամրացած կարբոնատային շերտից և քարերից: Հողանմուշներում ուսումնասիրվել է դրանց ֆիզիկա-քիմիական կազմը, հողային լուծույթի ռեակցիան, ջրալույծ աղերի քանակը, էլեկտրահաղորդականությունը (ԻՍԻ), մեխանիկական կազմը, հումուսի քանակությունները, մատչելի սննդատարրերի պարունակությունները: Տեղանքից վերցված ընդհանուր թվով 5 հողային նմուշները ներկայացվել են ՀՀ Էկոնիմակայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ հողային կարևորագույն տարրերի լաբորատոր հետազոտության նպատակով:

Հետազոտման տարածքը ընկած է ոռոգման երրորդ գոտում, որն ըստ ձեռնարկի նկարագրության ընդգրկում է Մեղրու, Գորիսի, Սիսիանի և Կապանի՝ 1400-2000մ բարձրություններ ունեցող լեռնատափաստանային հողատարածքները: Հողային ծածկոցը հիմնականում լեռնաշականագույն և սևահողեր են: Ոռոգման այս գոտու կլիման չորային է: Հետազոտվող հողերը ըստ լաբորատոր հետազոտությունների տվյալների ունեն կավավազային մեխանիկական կազմ: Հումուսի քանակությունը հետազոտվող հողանմուշներում կազմում է միջինը 4,5%: Հողերը աղակալված չեն դրանց պարունակությունը կազմում է (0,02-0,26%): Հողային լուծույթի ռեակցիան թույլ թթվայինի սահմանում է (7.3-8.0) Հետազոտվող հողանմուշները շարժուն ազոտով թույլ են ապահովված, ֆոսֆորով 1,2,3,5 հողանմուշները ապահովված են լավ, իսկ 4-ը միջակ և կալիումով թույլ են ապահովված:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Solid trade-ի կողմից Մյունխենի մարզի Մեդրի քաղաքի Արնիբ ազգային պարկի բաց դաշտից լաբորատոր առաջման ներկայացված ոչ կարբոնատային հողանուշի փորձարկման արդյունքների վերաբերյալ Փորձարկման արդյունքները

Հողանուշների №	Հալային միջուկայրի ունակցիան %	Աղի Պարունակություն %	ԻՄԻ	Մենզանյութերի քանակը, մգ 100 գր. հողում		
				Ազոտ N	Ֆոսֆոր P ₂ O ₅	Կալիում K ₂ O
Նմուշ 1	6,56	0,03	0,07	4,48	39,0	14,0
Նմուշ 2	6,07	0,19	0,37	3,92	39,0	16,0
Նմուշ 3	5,24	0,26	0,52	4,76	30,4	14,0
Նմուշ 4	6,89	0,02	0,03	3,64	32,5	10,0
Նմուշ 5	6,79	0,03	0,05	3,08	39,0	8,0
Պետք է լինի	≥ 7,0	< 0,30	< 2	10,0	30,0	36,0

Ըստ հողային միջուկայրի ունակցիայի չեզոք են:
 Աղի պարունակությունը նորմայի սահմանում է:
 Հողի ջրային լուծույթը էլեկտրահաղորդականությունը նորմայի սահմանում է:
 Ըստ մեխանիկական կազմի կավավազային տիպի են: Հումուսի պարունակությունը 4,5:
 Ըստ ազոտի հողանուշները թույլ են: Ըստ ֆոսֆորի հողանուշներ №1, 2, 3, 5-յակ են ապահովված, իսկ №4 միջակ: Ըստ կալիումի հողանուշները թույլ են:
 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողի ամենահարուստ շերտը 5-10սմ է, այդ իսկ պարունակված զանգված է ծառերի արևմտյան ժամանակ օգտագործել այդ շերտի հողը, որը կապահովվի բարձր պլուրդականություն:

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԳ-ի փոխստորեն



Ս. Նահրամանյան
 Խ. Ավետիսյան
 Տ. Կարդուկյան

Հեռ. 0 077 25 00
 30.08.2023թ.

Ընդհանուր առմամբ այս հողատարածքը ունի հողային բարենպաստ ֆիզիկաքիմիական պայմաններ միամյա և բազմամյա մշակաբույսերի, պտղատու այգիների և բազմամյա տնկարկների աճման և զարգացման համար:
 Հանված բուսահողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվելու է և օգտագործվելու է տարածքի հողային շերտի վերականգնման և բարեկարգման նպատակով:
 Հողային զանգվածը և բուսահողը ամբողջությամբ օգտագործվելու է համապատասխանաբար անցքերի և խրամուղիների լցման, տարածքների վերականգնման և բարեկարգման համար:
 Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցությունը լինելու է բարենպաստ, քանի որ անտառապատումը նպաստելու է հողի շերտի խոնավության պահպանմանը, հողերի դեգրադացիայի, էռոզիայի կանխարգելմանը: Այն կապահովվի տարածքի հողերի անապատացման գործընթացների կանխումը, կապահովվի բնական

միջավայրի լանդշաֆտաէկոլոգիական հավասարակշռության պահպանությունը: Անտառապատումը համարվում է հիմնական հակաէրոզիոն միջոցառումներից մեկը, քանի որ տնկիների արմատային համակարգի զարգացմանը զուգընթաց՝ էրոզիայի հավանականությունը վերանում է: Այն կնպաստի հողերի անապատացման կանխարգելելուն կամ մեղմացնելուն:

7.3. Ջրային ռեսուրսներ.

Համաձայն կատարված ուսումնասիրության՝ Նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրեր չեն հայտանբերվել: Նախատեսվող գործունեության բուն տարածքում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները: Մոտավորապես 150մ հեռավորության վրա գտնվում է Բողաքար գետը, որը հոսում է ազգային պարկի տարածքով:

Շինարարության փուլում աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ համապատասխան տարաներով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուրը՝ Բողաքար գոտի ջուրը՝ համապատասխան ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում:

Շահագործման փուլ. անտառմշակույթների պահպանման, կաչողականության ամրապնդման համար նախատեսվում է ոռոգման ցանցի կառուցում: Տարածքում նախկինում գործել է ջրամատակարարման ոռոգման համակարգ՝ ջրանցքի (կանալի) տեսքով, որի մնացորդերը տեսանելի են տեղանքում:

Ոռոգման նպատակով ջրառը նախատեսվում է իրականացնել Բողաքար գետի երկու՝ N1 38°59'41.12"N, 46° 8'46.72"E և N2՝ 38°59'39.50"N, 46° 8'49.34"E կոորդինատային կետերից: Ջուրը տեղանք կհասնի ինքքևահոս եղանակով՝ 100մ տրամագծով պոլիէթիլենային խողովակով:

Տվյալ կոորդինատներով կետերից ջրառի իրականացման հնարավորությունները գնահատելու, ինչպես նաև նախագծի շրջանակներում անտառային տնտեսություն վարող կազմակերպության ջրօգտագործման թույլտվության ստանալու նպատակով՝ Մեղրիգետ-Մեղրի հիդրոլոգիական դիտակետի տվյալների հիման վրա, «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացրել է ջրառի կետերի միջին և էկոլոգիական թողքի ամսական ելքերի արժեքների հաշվարկ: Հավելված 3:

Անտառապատման համար ընտրված տարածքում, ըստ նախատեսվող ծառատեսակների ոռոգման ռեժիմը (որոգման նետտո նորմ ` մ³/հա, ջրումների թիվ(հատ) սահմանելու համար հիմք է հանդիսացել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և THE WORLD BANK IBRD. IDA կողմից 2022 թավականին հրապարկված «Կաթիլային ոռոգման նորմեր Հայաստանի հանրապետության գյուղատնտեսական և ոռոգման գոտիներում» ձեռնարկը: Ըստ հողային նմուշների լաբորատոր հետազոտության և տեղադիրքի նկարագրության հետազոտման տարածքն ընկած է ոռոգման գյուղատնտեսական Չանգեզուր գոտում (N36 ռեժիմ), որն ընդգրկում է ծովի մակերևույթից 1400-2000մ բարձրությունները, կավավազային կամ կավային մեխանիկական կազմություն ունեցող հողերը: Այս գոտուն բնորոշ է ոռոգելի երկրագործությունը: Ըստ ուսումնասիրությունների՝ հետազոտման տարածքում նախատեսված անտառմշակույթների բարձր կաչողունակությունն ապահովելու համար 1հա-ի հաշվով կպահանջվի 3800մ³: Ընդհանուր առմամբ 8,4 հա ընտրված տարածքում

229 օր վեգետացիայի տևողությամբ ոռոգման համար կպահանջվի մոտ 32000մ³ ջուր: Անտառապատման տարածքում ջրումը նախատեսվում է իրականացնել անտառապատման առաջին տնկման հետ զուգահեռ, պարբերաբար, հաջորդ տարում նախատեսվող լրացման աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար: Տարեկան ընդհանուր ջրումների քանակը՝ 19 անգամ:

«Արևիք» ազգային պարկի տարածքում Անտառապատման աշխատանքներն իրականացնելու նպատակով՝ «Ձանգեգուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ծրագրի իրականացման առաջին տարվա համար պետք է ներկայացնի ջրօգտագործման թույլտվության ստացման, իսկ աշխատանքների իրականացման 2-րդ տարում՝ ջրօգտագործման թույլտվության երկարաձգման հայտ՝ կցելով ՀՀ Կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1332 որոշման 10-րդ հավելվածով պահանջվող փաստաթղթերը: Սույն որոշմամբ պահանջվող «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվող ջրառի կետերի միջին և էկոլոգիական թողքի ամսական ելքերի արժեքների հաշվարկի տեղեկատվությունը:

7.4. Կենսաբազմազանություն.

Գործունեությունն իրականացվում է «ՁԱՆԳԵԶՈՒՐ ԿԵՆՍՈՒՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի «ԱՐՎԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ՝ բուսականությունից զուրկ տարածքում: Ազգային պարկի պահպանության օբյեկտը Մեղրիի եզակի բուսական և կենդանական աշխարհի պահպանումն է:

Նկար 17



Ազգային պարկի տարածքում առկա են ուղղաձիգ բնական գոտիներ և լանդշաֆտների տարբեր տեսակներ՝ ալպյան մարգագետիններ, լեռնային տափաստաններ, անտառային զանգվածներ, կիսաանապատներ: Ազգային պարկն ունի հարուստ կենսաբազմազանություն: Այն ստեղծվել է «Բողաքար» արգելավայրի, Մեղրու տիպիկ լեռնային ֆլորիստիկ շրջանի, Մեղրու լեռնաշղթայի և Նրա լեռնաբազուկների լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, Էնդեմիկ հազվագյուտ և վտանգված տեսակների, դրանց բնակության միջավայրերի, բնապատմական ժառանգության և բնական պաշարների պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովման նպատակով:

Բուսական աշխարհը և շատ հարուստ է: ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնաբերվել են այնպիսի տեսակներ, որոնք աճում են միայն Մեղրու ֆլորիստիկ շրջանում. Չորապտեր արծվապտերային (*Chelanthus pteridioides*), Հուդայածառ գրիֆիթի (*Cercis Griffithii*), Գիրգենսոնիա հակադրածաղիկ (*Girgensohnia oppositiflora*), Ձմերուկ վայրի (*Citrullus colocynthis*), Անդրախնետ, Ամմեռուկ կլորատերև (*Andrachne rotundifolia*), Տափոլոռ խաղողանման (*Lathyrus vinealis*), Թրաշուշան աղասեր (*Gladiolus halophilus*), Կատվադաղձ լեղդախոտատերև (*Nepeta teuchiifolia*), Սագասոխուկ ցողունավոր (*Gagea stipitata*), Եղբորոսին կծկծուկաձև (*Cephalanthera epipactoides*), Կծկծուկ դանձլամերատերև (*Epipactis veratrifolia*), Սարդակիր կովկասյան (*Ophrys caucasica*), Սարդակիր բռնակիր (*Ophrys oestriifera*), Խուլորձ շելկովսիկովի (*Orchis Punctulata*), Էննեպոգոն պարսկական (*Enneapogon persicus*), Գևմնածաղիկ ռավենյան (*Erianthus ravennae*) և այլն:

Կենդանական աշխարհ. Սյունիքի մարզը հարուստ է ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչներով: ՀՀ կենդանիների կարմիր գրքում (2010) ընդգրկված 308 կենդանատեսակներից Սյունիքի մարզում հաշվարկվել են 121 տեսակ:

«Արևիք»ԱՊ-ը բնակատեղի է հազվագյուտ և անհետացող այնպիսի կենդանական տեսակների համար, ինչպիսիք են Առաջավորասիական հովազը (*Panthera pardus saxicolor*), Բեզդարյան այծը (*Capra aegagrus*), Հայկական մուֆլոնը (*Ovis ammon gmelini*), Միջերկրածովային կրիան (*Testudo graeca*), Հայկական իժը (*Vipera raddei*), Կովկասյան ջրասամույրը (*Lutra lutra meridionalis*), Կասպիական հնդկահավը (*Tetraogallus caspius*), Կովկասյան մայրեհավը (*Tetrao mlukosiewiczi*) և այլն:

Իսկ բուն գործունեության տարածքը հիմնականում զուրկ է բնականությունից: Նախատեսվող աշխատանքների իրականացումը չի անդրադառնա Ազգային պարկի կենսաբազմազանության վրա, այլ ընդհակառակը կարող է նպաստել բուսատեսակների և կենդանատեսակների տարածմանը և կենդանական աշխարհի զարգացման համար պիտանի բնական միջավայր ստեղծմանը:

Գործունեության իրականացման համար բույսերի տեսակային կազմում ընտրվել են բացառապես ծառերի տնկիների տեղական և տարածաշրջանին բնորոշ անտառտնկարկային տեսակները, որոնք չեն խաթարի ազգային պարկի բուսական աշխարհին:

Շահագործման փուլում ազդեցությունները կլինեն դրական, քանի որ անտառպատումը նպաստելու է ԲՊՏ-ի բուսածածկույթի աճին, որը կկարգավորի նաև

տարածքում կենդանական և բուսական աշխարհի զարգացումը:

7.5 Թափոններ.

Շինարարության փուլում գործունեության իրականացման հետևանքով առաջանալու են թափոններ՝ կենցաղային աղբի, օգտագործվող կյուլթերի մնացորդների տեսքով:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող կենցաղային թափոնները պատկանում են վտանգավորության 4-րդ դասին:

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4):

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև այլ թափոններ, կյուլթերի մնացորդներ՝ մետաղական փշալար, փայտ, որոնք չեն կուտակվելու տեղում, տեղափոխվելու են Գործունեությունն իրականացնողի կողմից: Այս թափոնների քանակական գնահատում չի կատարվել, քանի որ հնարավոր է գործունեության ընթացքում չառաջանան:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=30*120= 3600 \text{ կգ/տ կամ } 9.8\text{կգ/օր}$$

Շինարարությունը տևելու է 7 տարի հետրևաբար.

$$M=3600*7 =25200\text{կգ/տ կամ } 11.5 \text{ կգ/օր (2184 աշխատանքային օր)}$$

7.6 Արտակարգ իրավիճակներ, Հրդեհանվտանգություն.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացումը կապված է.

- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն), հրդեհների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացման,
- տեխնածին երևույթների, հեղուկ կյուլթերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շահագործման փուլ. Անտառպատումը կնպաստի տվյալ տարածքում ջերմային բալանսի կարգավորմանը և աղետների կառավարմանը: Արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել հնարավոր հրդեհային իրավիճակների և այլ տարերային երևույթների(երկրաշարժ, քամի և այլն) դեպքում: Անտառտնտեսության և հատկապես Ազգային պարկերի համար անտառային հրդեհները համարվում են դժվար կառավարելի ռիսկեր և ունեն բացասական բնապահպանական ազդեցություն շրջակա միջավայրի

վրա: Այս առումով կարևոր է Պարկի տարածում ունենալ մի քանի հսկիչից բաղկացած անձնակազմ, որոնք անմիջապես կարծազանքեն հրդեհի մարման և ահազանգման գործողություններին:

Հրդեհների ռիսկը վերահսկելու և կանխարգելու համար հաշվետվությունում նախատեսվում են կանխարգելիչ և բնապահպանական միջոցառումներ:

7.7 Աղմուկ և թրթռում, վիբրացիա:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Զաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԲԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար սահմանվում է 80 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների առաջացում չի նախատեսվում, գործունեության վայրում մեքենաներ և մեխանիզմներ չեն օգտագործվելու: Փոսերի փորման աշխատանքները կատարվելու են ձեռքով:

7.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշմամբ սահմանված պատմամշակութային և ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ սահմանված բնության հուշարձանները:

Միաժամանակ հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ հնագիտական գտածոների ի հայտ գալուն ուղղված:

7.9 Աշխատանքի անվտանգություն և մարդու առողջություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը սպառնացող վտանգներ կապված.

գործունեության իրականացման ընթացքում տեխնիկա- տրանսպորտային միջոցների շահագործման հնարավոր վթարների,

- տարբեր տեսակի սարքերի, տեխնիկայի անսարքության, աշխատողների վնասվածքների,
- հրդեհների, հեղուկ կյուլթերի արտահոսքի,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման հետ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առողջության և աշխատանքի անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև սանիտարական

իրավիճակի և այլ գործոնների հետ: Աշխատողների համար առողջության և անվտանգության համար պոտենցիալ վտանգ կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) ոչ բավարար լինելու պատճառով: Այդ նպատակով շինարարության ամբողջ ընթացքում ապահովվելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը: Մարդու առողջության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով գործունեության իրականացումը կազմակերպվելու է ոլորտին առնչվող ՀՀ-ում գործող օրենսդրության՝ օրենքների, կառավարության որոշումների, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են միջոցառումներ, ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

7.10 Սոցիալական ազդեցություն

Գործունեությունն իրականացվելու է Մեդրի համայնքի վարչական տարածքում: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու, քանի որ անտառապատումը կատարվելու է «Արևիք»ԱՊ-ի տարածքում:

Օգտագործվելու է գոյություն ունեցող գրունտային ճանապարհը: Անտառտնկումն ունենալու է դրական սոցիալական ազդեցություն, քանի որ.

- Անտառվերականգմանն ուղղված աշխատանքները կարող են նպաստել համայնքների աջակցման, զարգացման և էկոհամակարգերի խթանման գործընթացին:
- Նախատեսված անտառապատման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում մոտակա համայնքների բնակչության համար կստեղծվեն նոր աշխատատեղեր՝ 30 մարդ:

Նախատեսվող գործունեությունը չի հակասում Հայաստանի Հանրապետության Սյունիքի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության դրույթներին: Գործունեության իրականացումը կնպաստի ազգային պարկի կենսաբազմազանության, համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Շահագործման փուլ.

- Անտառապատման աշխատանքների իրականացման արդյունքում կընդլայնվեն անտառածածկտարածքները, կբարելավվի տարածքի միկրոկլիման:
- Ստեղծվող տնկարկները կնպաստեն էկոլոգիական հաշվեկշռի կարգավորմանը, առողջարարական և ռեկրեացիոն հնարավորությունների բարձրացմանը, ինչպես նաև շրջակա համայնքների համար կհանդիսանան վայրի պտուղների մթերման և օգտագործման լուրջ աղբյուր:
- Կնպաստի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, քանի որ կտնկվեն պտղատու ծառեր, որոնցից ստացված բարիքներից կօգտվեն բնակիչները:

- Կենդանիների արածեցումից և այլ հնարավոր վտանգներից խուսափելու նպատակով, նախքան տնկումներ իրականացնելը, տարածքները ցանկապատվելու են :

Նախագիծն ինքնին նպաստելու է համայնքում պտղատու անտամշակույթուրեի ստեղծմանը, որը կնպաստի կենսառեսուրսների ընդլայնմանը, ջերմոցային գազերի կլանմանը, օրգանական ածխածնի կուտակմանը, կունենա հակաերոզիոն նշանակություն, ինճպես նախագիծով նախատեսվում է աշխատակիցների ընդգրկում նախագծի իրականացման առաջին իսկ փուլից, որտեղ կարող են ընդգրվել նաև հմուտակա բնակավայրերի բնակիչները:

7.11 Լանդշաֆտ.

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է «Արևիք» ԱՊ-ի ոչ անտառապատ տարածքում՝ նոսրուտներում: Անտառապատումը կնպաստի լանդշաֆտի՝ կանաչ հատվածի ավելացմանը, հողի որակական հատկանիշների բարելավմանը, կապահովի բնական միջավայրի լանդշաֆտաեկոլոգիական հավասարակշռության պահպանությունը:

8. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր/շինարարության և շահագործման փուլեր/

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը ներառում է Մեղրի համայնքի վարչական տարածքը՝ «ՉԱՆԳԵՉՈՒՐ ԿԵՆՍՈՆՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի «ԱՐԱԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի վրա:

Մշակվել են գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև կազմվել է այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման մոնիթորինգի ծրագիր: Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն վերջինները կլինեն կարճաժամկետ: Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, տարածքի կենսաբազմազանության, մարդու առողջության պահպանման հետ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ճիշտ

կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

Ելնելով գործունեության բնույթից շահագործման փուլում օդային ավազանի միջոցառումներ չեն նախատեսվում:

8.1. Օդային ավազան

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- ճանապարհների շահագործման ընթացքում կկատարվի գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան՝ մեխանիկական եղանակով:
- Գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ փակել անջրթափանց թաղանթով:
- Տարածքում նյութերը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով:
- Տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում:
- Բացառել թափոնների այրումը բաց տարածքներում:

Ելնելով գործունեության բնույթից շահագործման փուլում օդային ավազանի միջոցառումներ չեն նախատեսվում:

8.2. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա, բացառելով տարածքում բոլոր տեսակի հեղուկ նյութերի և քսուքների պահումը:
- Բացառել նյութերի տեղակայումը խոտածածկ տարածքների վրա:
- Գործունեության ընթացքում օգտագործել միայն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները:
- Տրանսպորտային միջոցների լիցքավորումը, վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:
- Գործունեության իրականացման համար տրամադրվող հողերի վերականգնում:

Ելնելով գործունեության բնույթից շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում:

8.3. Ջրային ռեսուրսներ

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շտերով):
- Ջրցանի և փոշենստեցման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր:
- Բացառել առաջացող հնարավոր հոսքաջրերի տարածումը խոտածածկ

հատվածներ:

Կեղտաջրեր. աշխատողների կենցաղային կարիքների համար տեղադրվելու են շարժական բիոզուգարաններ՝ 2 հատ:

Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատանքների ավարտից հետո դրանք ապամոնտաժվելու են:

Շահագործման փուլում ապահովել տարածքի ոռոգումը՝ Անտառտնտեսության պահպանման, բնական վերածին օժանդակելու նպատակով:

- Ոռոգման համար անհրաժեշտ ջուրը բերել 100մ տրամագծով պոլիէթիլենային խողովակով՝ Բողաքար գետից:
- Ջրառը կատարել Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:

8.4. Կենսաբազմազանություն

Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .

- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ տեղամասը որպես պահպանվող գոտին:
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման ժամանակամիջոցում խուսափել ինտենսիվ աշխատանքներից:
- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:
- Անտառպատումը կատարել միայն հաշվետվությամբ նախատեսված ծառատեսակներով, բացառել այլ տեսակի/ինվազիվ/ ծառերի տնկումը:
- Խախտված հողաաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:
- Անտառպատման աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար:
- Ցանկապատման ընթացքում պահպանել հողակտորների միջև գրունտային ճանապարհների անցանելիությունը՝ վայրի կենդանիների տեղաշարժին, միգրացիոն ուղիների և բնակմիջավայրի սահմանների խաթարումից խուսափելու նպատակով:

Շահագործման փուլ. անտառպատումը կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է.

- Բուսականության բարձր աճն ապահովելու համար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից:

- Անտառապաթուրոգիական ուսումնասիրությունների կատարում՝ առանձին ծառերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության աստիճանը անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելման համար:
- **Ղաշտամկների դեմ պայքարի աշխատանքներ՝ 1 հա-ի հաշվով օգտագործելով 200գ ցինկի ֆոսֆիդ, որը պետք է խառնվի 4կգ, գրավչանյութի (ցորեն) և 0,2լ ձեթի հետ:**
- Հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարում հնարավորության դեպքում նախապատվությունը տալ պայքարի կենսաբանական մեթոդներին, իսկ անբուժելիական պայքարի միջոցառումներ կատարել միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ անտառապաթուրոգիական ուսումնասիրության արդյունքների հիման վրա:
- Անտառամշակույթների հիմնադրումից հետո, հաջորդ տարիների ընթացքում անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացում անհրաժեշտության դեպքում:
- Բացառել վնասատուների դեմ պայքարի նպատակով թունանյութերի և այն քիմիական նյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են Կառավարության 2005թ.-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշման մեջ:

8.5 Անտառնշակույթների հիմնում, պահպանում, խնամք.

Անտառնշակույթների պահպանման և խնամքի նպակաով նախատեսվում է.

- Անտառնշակույթների հիմնումը կատարել առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի հանարապետությունում հատուկ Պահպանվող Տարածքների Ռազմավարությունը, պահպանության և Օգտագործման Բնագավառում Պետական Ծրագիրը և Միջոցառումները հաստատելու մասին» N059-Ա որոշման պահանջներից:
- Հիմնադրման տարում ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ՝ 4 անգամ, խոտհունձ 1 անգամ:
- Անտառնշակույթների աշնանը հիմնադրման դեպքում՝ հաջորդ տարում 4 ագրոտեխնիկական խնամքի և 1 խոտհունձի աշխատանքների իրականացում:
- Անտառնշակույթների հիմնադրման երկրորդ տարում ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ իրականացում 3 անգամ, խոտհունձի աշխատանքներ 1 անգամ:
- Երրորդ տարում ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ իրականացնել 2 անգամ, խոտհունձի աշխատանքներ 1 անգամ:
- Չորրորդ տարում ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ իրականացնել 1 անգամ, խոտհունձի աշխատանքներ 1 անգամ:
- Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ տարիներին խոտհունձի աշխատանքներ իրականացում՝ 1 անգամ:

- Անտառմշակույթների բարձր կաչողականությունն ապահովելու համար, նախատեսված է տնկման հետ զուգահեռ և վեգետացիոն ժամանակահատվածում կատարել անտառմշակույթների ոռոգման աշխատանքներ:

8.6. Թափոններ

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա թափոնների հնարավոր վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի, մետաղական մասերի և այլ թափոնների կուտակումից:
- Շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն գործունեությունն իրականացնող ընկերության կողմից:
- Անհրաժեշտության դեպքում մետաղական մասերի, փայտանյութի թափոնները հանձնել համապատասխան մասնագիտական կազմակերպություններին՝ վերամշակման:
- Կենցաղային աղբը հավաքել պոլիէթիլենային պարկերի մեջ և ամենօր տեղափոխել գործունեության վայրից:

8.7. Արտակարգ իրավիճակներ, Հրդեհանվտանգություն.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով:
- Աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին:
- Հեղուկ նյութերը տարածքում պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլ. հրդեհների կանխարգելումն ապահովելու նպատակով նախատեսվում է.

- բաց պահել հրդեհանվտանգության գործող ճանապարհները:
- Ապահովել ջրի բաքերի առկայությունը, ջրով լցվածությունը:
- Համապատասխան հսկիչ անձնակազմի առկայություն, որոնք կտիրապետեն հրդեհամարման և արագ արձագանգման գործառույթներին:

8.8. Աղմուկ և թրթռում

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել

ցերեկային ժամերին:

- տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում:
- Շահագործման փուլում ելնելով գործունեության բնույթից աղմուկ չի առաջանում, գնահատում չի կատարվում:

8.9 Պատմամշակութային հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները ,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը,
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն տեղական իշխանությունների և պատասխանատուների կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքում:

Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

8.10. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում աշխատողների առողջությունն, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները:
- Աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով:
- Աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար:
- Տարածքն ապահովել հակահրդեհային հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով:

- Բացառել գործունեության վայրում խոտանված սարքերի կուտակումները:
- Վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները մեկ վայրում:
- Աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:
- Մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

8.11. Սոցիալական գործունեություններ.

- գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու:
- Գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները:
- Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 30:

8.12. Լանդշաֆտ. Բարեկարգում .

Գործունեության տարածքի լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները:
- Հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, տարածքի բնական վիճակի պահպանման պահանջները:
- Նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ այլ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման
- աշխատանքներ:

